**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի**

# ՈՐՈՇՈՒՄ

**8 Սեպտեմբերի 2023, N 2 - 7**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող Էրիկ Սամվելի Տեր-Պողոսյանի ուսանողական իրավունքները վերականգնելու մասին**

**Լսելով և քննարկելով՝** «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի N ՈՒԲ /117/ 9-Ա հրամանով ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտության «Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու (13.07.2022) կապակցությամբ 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կուրսի 1-ին կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով 2023 թվականի մարտի 21-ին վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (28.06.2023) դիմած ուսանող Էրիկ Սամվելի Տեր-Պողոսյանի ուսանողական իրավունքները 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

**Հիմք ընդունելով**, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունն ընդհատած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում

ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով մարտական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Էրիկ Սամվելի Տեր-Պողոսյանը սահմանված ժամկետում իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար չի դիմել համալսարան, քանի որ ունեցել է առողջական խնդիրներ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Էրիկ Սամվելի Տեր-Պողոսյանի ուսանողական իրավունքները վերականգնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտության «Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրսում 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից:**

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. սեպտեմբերի 8
Երևան